

«Զարթոնք»ը կարելի է կարդալ նաև համացանցի վրայ հետևելով հասցեով՝

www.zartonkdaily.com

ինչպես նաև ձեր անհատական թղթակցություններն ու ծանուցումները կրկնաբ փոխանցել խմբագրության հետևելով հասցեներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

Ծանոթ՝ խմբագրատան քարտուղարության ժամերն են. երկուշաբթին - ուրբաթ՝ կեսօրույ ժամը 12:00-էն երեկոյան ժամը 8:00

Էջ 02 **Յօդուած**
Ամերիկահայ Յայտնի Ազգային՝ Կարապետ (Չարի) Սիլվահեան

Էջ 03 **Մշակութային Արձագանգ**
Բեղմնաւոր Համագործակցութիւն Intermarc-ի եւ Noah's Ark-ի միջեւ

Էջ 04 **Մարզական**
Զելթա Տէ Վիկո Չիչեցաւ Վալենսիային

Լիբանանեան Լուրեր

Յաջորդաբար Երկրորդ Օրն Ըլլալով Խորհրդարանական Ժողով Գումարուեցաւ Շարունակելու Կառավարութեան Աշխատանքները Գնահատելու Քննարկումները



Յաջորդաբար երկրորդ օրն ըլլալով խորհրդարանական ժողով գումարուեցաւ՝ շարունակելու կառավարութեան աշխատանքները գնահատելու քննարկումները:

Հիմնական օրակարգը Ընտրական Նոր օրէնքն էր, որուն շուրջ կեդրոնացան գրեթէ բոլոր խօսքերը:

Հրգայալ քննադատեց Սուրիոյ Կրայ Գործադրուած Ամերիկեան Յարձակումը

Հրգայալ Սուրիոյ վրայ գործադրուած ամերիկեան յարձակումը քննադատեց, յայտարարելով որ ան անելի էս կը սլէ միջազգային լարուածութիւնը:

Հրգայալ յարձակումը որակեց որպէս Սուրիոյ ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը ոտնակոխող թշնամական արարք:

Հրգայալ Սուրիոյ վրայ գործադրուած ամերիկեան յարձակումը քննադատեց, յայտարարելով որ ան անելի էս կը սլէ միջազգային լարուածութիւնը:

Հրգայալ յարձակումը որակեց որպէս Սուրիոյ ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը ոտնակոխող թշնամական արարք:

Հայրենի Լուրեր

Նախագահ Սարգսեան Ճնորհաւորական Ուղերձ Յղած Է Մայրութեան Եւ Գեղեցկութեան Տօնին Առթիւ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան շնորհաւորական ուղերձ յղած է Մայրութեան եւ գեղեցկութեան տօնին առթիւ:

Ինչպէս կը յայտնէ ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը, ուղերձին մէջ կ'ըսուի.

«Սիրելի՛ կանայք, «Ճնորհաւորում եմ ձեզ Մայրութեան եւ գեղեցկութեան տօնի կապակցութեամբ:

«Մաղթում եմ ձեզ երջանկութիւն եւ ամենայն բարիք: Մաղթում եմ բոլորիդ, որ այս գեղեցիկ տօնը միշտ դիմաւորեք բարձր տրամադրութեամբ:

«Մենք՝ որպէս պետութիւն եւ հասարակութիւն, մտնում ենք փոփոխութիւնների և զարգացման կարելորագոյն փուլ, եւ այս գործընթացներում ամանձնակի մեծ է լինելու ձեր դերակատարութիւնը:

«Բազմադարեայ Հայաստանը ամուր է եղել նաեւ ձեզնով, իսկ այսօր՝ Նորացող մեր հայրենիքը ուժեղ եւ առաջադէմ է առաւելապէս ձեզնով: Ամուր եւ անհրազեկ ընտանիքը առհասարակ է



մեր ժողովրդի յարատեւութեան, եւ այդ յանձնարարական պատուարը դարձելով դուք եք:

«Այսօր առանձնայատուկ շնորհաւորում եմ այն մայրերին, որոնց որդիները հսկում եւ անառիկ են պահում մեր երկրի սահմանները, նաեւ զուլիս եմ խոնարհում այն մայրերի առջեւ, որոնց որդիներն անմահացան:

«Կրկին շնորհաւորելով՝ մաղթում եմ ձեզ ընտանեկան սեր ու ջերմութիւն, աշխատանքային յաջողութիւններ, հասարակական եռանդուն, արդիւնաւետ գործունեութիւն եւ յատկապէս՝ կանացի հմայք ու գեղեցկութիւն»:

Շրջանային Լուրեր

Ամերիկա Անսահընթաց Հրթիռարձակումներ Կատարեց Հոմսի «Շըրիհաթ» Օդակայանին Դեմ

Ամերիկեան ուժեր հրթիռային յարձակում մը գործած են Սուրիոյ բանակին պատկանող զինուորական օդակայանի մը դէմ: Այս մասին լուրը փոխանցեց «Ռոյթըրզ» լրատուական գործակալութիւնը Նշելով, որ հինգ շարժարկի ու զինուորական արձակումներ իրականացան Հոմսի քաղաքի «Շըրիհաթ» զինուորական օդակայանին ուղղութեամբ: Հոմսի քաղաքայէտը, որ դեպքէն տեղ խօսած է «Ալ Մայատին» կայանին յայտնած է, թէ յարձակումէն

տեղ մեծ հրդեհ մը ծագած է օդակայանին մէջ եւ հրշէջ մեքենաներ ուղղուած են դեպքի վայր: Զաղաքայէտը նաեւ քսած է, որ ամերիկեան ուժերուն թիրախ դարձած օդակայանը կարելուր դէր ունեցած է ահաբեկչական խմբաւորումներուն դէմ մղուած պատերազմին մէջ: Հոմսի քաղաքայէտը Նշած է, որ գործին հետեւանցով մարդկային տոյժեր չկան, սակայն նիւթական վնասները մեծ են:

Ըստ CNN-ի այս գրող տեղի ունեցած է առ ի պատասխան Իսլիպ քաղաքին



մէջ կատարուած քիմիական յարձակում, որ ըստ ամերիկայի պաշտօնական կարծիքին, կատարուած է Սուրիոյ իշխանութիւններուն ձեռամբ:

Ի՞նչի Կը Ծառայէր «Շըրիհաթ»ի Օդակայանը

ԱՄՆ ուժերու հրթիռակրծման հետեւանցով երկէ առաւօտեան հիմնայատակ կործանման ենթարկուած «Շըրիհաթ»ի ռազմական օդակայանը Հոմս քաղաքէն 31քմ. դէպի հարաւ-արեւելք, եւ Հոմսի Հիւսիսային արուարձանէն 41քմ. հեռավորութեան վրայ կը գտնուի:

ԱՄՆ Չինուած ուժերը Ուրբաթ, 7 Ապրիլի առաւօտեան «Թոմահոք» տիպի թիւով 59 հրթիռներու միջոցով հիմնայատակ քանդած է «Շըրիհաթ»ի օդակայանը, իր արարքին պատճառը վերագրելով այն բանին, որ Նշուած օդակայանէն Սուրիոյ կառավարական ուժերուն կողմէ արձակուած են օրեր առաջ Իսլիպի արուարձանին մէջ մեծ վնասներ պատճառած քիմիական նիւթերը:

Փենթագոնի մամուլ խօսակնի հաւաստմամբ, «Շըրիհաթ»ի ռազմական օդակայանի հրթիռակրծման թիրախ դարձան այնտեղ գտնուող օդանաւերը, օդանաւատուները, վառելանիւթի պահեստները, զինամթերքի եւ օդային պաշտպանութեան համակարգերը, հերձուածային օդակայանի ռատարները:

Նշենք, որ «Շըրիհաթ»ի ռազմական օդակայանը Սուրիոյ կեդրոնական շրջանին մէջ գործող կարելորագոյն ռազմակայանն է, ուր տեղի կ'ունենան խոշորագոյն զինավարժութիւնները: Այնտեղ կը կազմակերպուին նաեւ ռազմական ցուցադրութիւններու մեծ մասն ու միջին եւ ծանր զինամթերքի օգտագործման հիմնարկութեան յայտարարութեան, վերջինս նախապէս զգուշացուցած էր Մոսկուան, որ մտադիր է հրթիռակրծման ենթարկել «Շըրիհաթ»ի ռազմական օդակայանը:

Նախկին զօրավարժութիւնները:

Յիշենք նաեւ, որ «Շըրիհաթ»ի ռազմական օդակայանը Իրանի կողմէ կ'օգտագործուէր որպէս Սուրիոյ եւ Իրաքի մէջ իրագործուող իր ռազմական գործողութիւններու գլխաւոր կայան: Օդակայանին մէջ տեղակայուած են ռուսական օդուժի միաւորները, որոնք, ըստ ԱՄՆ պաշտպանութեան նախարարութեան, հրթիռակրծման թիրախ չեն հանդիսացած:

Ըստ ԱՄՆ պաշտպանութեան նախարարութեան յայտարարութեան, վերջինս նախապէս զգուշացուցած էր Մոսկուան, որ մտադիր է հրթիռակրծման ենթարկել «Շըրիհաթ»ի ռազմական օդակայանը:

Եթէ Իրան Զմիջամտեր, Հայերը Պաքու Պիտի Հասնէին. Իրանցի Նախկին Հրամանատար



Իրանի հետախուզութեան նախկին հրամանատար Մանսուր Հադիդափուր, «Azariha.org» լրատուական գործակալութեան յայտնած է, թէ ժամանակին, «Եթէ Իրան չօգնէր Ազրայէճանին, հայերը Պաքու պիտի հասնէին», կը հարողդէ «Փանտրամա»-ն:

Հադիդափուր, որ ծառայած է Իսլամական յեղափոխութեան պաշտպաններու ջոկատներուն մէջ, յայտարարած է նաեւ, որ դարաբաղեան պատերազմի տարիներուն ինք եղած է Ազրայէճանի նախագահի ռազմական խորհրդակալը:

«Իրան փրկեց ազրայէճանցի ժողովուրդը. հակառակ պարագային, հայերը կրնային նոյնիսկ Պաքուն գրաւել: Այն օրերուն, մենք Պաքուի մէջ 6500 զինուոր պատրաստեցինք: Մինչեւ օրս, Ազրայէճան Իրանին 30 միլիոն տոլար պարտք

ունի, սակայն Իրան երբեք չէ արձարձած այդ հարցը: Եթէ Իրանի փոխարէն Թուրքիան ըլլար, անիկա շատոնց արդէն պիտի պահանջէր գումարը, կամ պիտի օգտուէր՝ անկէ 10 անգամ անելի մեծ շահ խլելով», ակեցուցած է ան:

Իր կարգին, ազրայէճանական «Հաքքին» լրատու գործակալութիւնը կը հարողդէ, թէ ազրայէճանցի պատգամաւոր Սիււուշ Նովրուզով «խարդախ» որակած է Հադիդափուրը՝ պնդելով, որ «1992-1993 տարիներուն, ան հայկական հետախուզութեան տունէն փոխանցած է Ղարաբաղի մէջ ազրայէճանական բանակի ստորաբաժաններու տեղակայման մասին»: Նովրուզով պնդած է, թէ Հադիդափուրը՝ «հայկական հետախուզութեան գաղտնի գործակալ է»:

Սահմանագիծի Հիւսիսարեւելեան Ուղղութեամբ Ազրայէճանական Չինուժը Կիրառած Է Ականանետ



Ապրիլ 6-ին եւ լոյս 7-ի գիշերը արցախ-ազրայէճանական հակամարտ գործերու շփման գիծին վրայ, հակառակորդ տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներէ հրադարձարը խախտած է անելի քան 25 անգամ՝ հայ դիրքապահ-

ներու ուղղութեամբ արձակելով շուրջ 400 կրակոց:

Արցախի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութեան փոխանցմամբ՝ շփման գիծի հիւսիսարեւելեան ուղղութեամբ ազրայէճանական զինուժը կիրառած է նաեւ 60 միլիմետրոնց ականանետ (4 արկ):

ՊԲ առաջապահ զօրամասերը կը շարունակեն լիակատար վերահսկողութիւն պահպանել առաջնագիծին վրայ՝ անհրաժեշտութեան պարագային դիմելով նաեւ պատասխան գործողութիւններու:

Միջազգային Լուրեր

Սթրոքիով Յարձակման ենթարկուեցաւ Եւ Բոլոր Նախադրեալները Կ'ապացուցեն Անոր Ահաբեկչութիւն Ըլլալը. Շուէտի Վարչապետ

Շուէտի Վարչապետ Ստեֆան Լոֆվէն յայտարարած է, որ Սթրոքիով յարձակման ենթարկուեցաւ, եւ բոլոր նախադրեալները կ'ապացուցեն անոր ահաբեկչական յարձակում ըլլալը: Այս մասին կը գրէ «LBCI» լրատուական կայ-

քը:

Նշենք, որ քիչ առաջ Շուէտի մայրաքաղաք Սթրոքիովի գլխաւոր շուկային մէջ բեռնատար մը վրաերթի ենթարկելով փողոցի անցորդները 3 քաղաքացիի մահուան պատճառ դարձած է, իսկ 8 այլ

անձեր վիրաւորուած են:

Տեղի իրաւասու մարմինները փակած են դէպքի վայր տանող ճամբաներն ու մեթրոյի կայարանները, եւ կոչ ուղղած են քննչութեան՝ հետու մնալու քաղաքի կեդրոնական շրջաններէն:

Խմբագրատան մեջ

Արցախի մանկավարժներու հետ

Երեկ երեկոյան «Չարթոս»-ի խմբագրատան այցելեցին Հայաստանի Հանրապետության Արևմտյան նահանգային «Դուրս ԻՄ» կ'ընտան Արցախի համար» համահայկական շարժման ծիրան Երև, Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանին մեջ իրականացնելիք ծրագիրով Պելլուր գտնուող Մարտակերտի Վարդան Միևստեանի անունան թիւ 2 հիմնական դպրոցի տնօրէն Մելիսա Զարդումեանը եւ դպրոցի ուսումնական ղեկավարները ունեցող աշակերտներու ներառման գործընթացի պատասխանատու ուսուցիչներ՝ Լուսինէ Սահյանը եւ Ռուզաննա Անտիսեանը: Յարգելի հիւրերուն կ'ընկերակցէր Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանի տնօրէնուհի Տիկ. Ռիթա Պոյաճեանը:



ռուբինը փոխանցելու:

Արցախի մանկավարժները լաւապէս տպաւորուած իրենց կարծ, սակայն օգտաշատ այցելութեամբ՝ դուրստի-քով խօսեցան այս ծիրան Երև Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանին մեջ ի գործ դրուած աշխատանքին մասին: Անոնք գոհ էին, որ առիթը պիտի ունենան, նոր փորձառութեամբ եւ աւելի եւս հարստացած ներառական ուսման յատուկ գիտելիքներով, ծառայելու իրենց Արցախի սիրելի աշակերտներուն:

Տիկ. Զարդումեան իրեն յատուկ անմիջականութեամբ եւ մղումով յայտնեց, որ Հայ ժողովուրդի համար իւրա-

քանչիւր փոքրիկ աւելի քան կարելու է: Հետեւաբար իւրաքանչիւրին պետքերուն հասնիլը, ոչ միայն մարդկային պարտականութիւն է, այլ՝ ազգային գերագոյն ռազմավարութիւն:

Արցախի մանկավարժները, գլխաւորութեամբ իրենց տնօրէնուհին մեծապէս տպաւորուած էին լիբանանահայ գաղութի կենսունակութեամբ եւ հայկականութեամբ լեցուն ոգիով: Անոնք գոհունակութիւն յայտնեցին լիբանանահայութեան հետ մօտեն ծանօթացած ըլլալու այս այցելութեամբ ստեղծուած առիթին համար:

«Խմբ.»

Արցախը Այսօր Արցախի Հարաւային Դարպասը Կ'ամրանայ Առաջամուկի Չարգացման Ծրագիրները Կը Շարունակուին

ՆՈՐԱՅՐ ՅՈՎԱՏԵՓԵՆ «Չարթոս»-ի Արցախի Աշխատակից

Արցախի Հանրապետության նախագահը այցելած է առաջնագիծի հարաւային հատուած: Դիրքապահները կը հերթապահեն՝ պատրաստ իրադարձութիւններու որեւէ շրջադարձի: Բալթ Սահակեան ծանօթացած է նաեւ զինծառայողներու առօրեային, պարգեատրած՝ ուշադրութիւն գրաւողները: Իսկ դիրքապահներու թիկունքին՝ Առաջամուկի է, հարաւային ուղղութեամբ սահմանին ամենամօտ արցախեան բնակավայրը: «Թուֆէնկեան» հիմնադրամը 2004-էն ի վեր այստեղ արդէն կառուցած է մօտ երկու տասնեակ բնակարան: Ապրիլ 4-ին, Առաջամուկի մէջ մարդաշատ հաւաքին առիթը եւս 6 նոր առանձնատան շինարարութեան աւարտն է:

Ծրագիրը իրականացած է Արցախի Հանրապետության կառավարութեան, «Թուֆէնկեան» հիմնադրամի եւ «Արցախ ֆոնտ» կազմակերպութեան ԱՄՆ մասնաճիւղի համաֆինանսատրուով: Տուներու յանձնման հանդիսաւոր արարողութեան ներկայ էին ծրագրի բոլոր մասնակիցները՝ եւ Արցախի բարձրաստիճան պաշտօնեաները, նախագահի ու վարչապետի գլխաւորութեամբ, եւ «Թուֆէնկեան» հիմնադրամի ներկայացուցիչները: «Այս տարածքը կարելու ռազմավարական նշանակութիւն ունի: Կը կապուի մնացեալ գիւղերուն հետ, մօտ է առաջնագիծին: Այս գիւղի բնակիչները, իրենց գիւղը զարգացնելով, այս ողջ գիծը բանուկ կը պահեն»,- Առաջամուկի նկատմամբ հիմնադրամին ուշադրութիւնը հիմնադրած է «Թուֆէնկեան» հիմնադրամի տնօրէն Բաֆֆի Տուտազըլեան:

Նորակառոյց բնակարաններու բա-

Ստեփանակերտ

Advertisement for RagMamoul.net with a group of people and a megaphone. Text includes 'Այցելեցէք', 'Կարդացէք', 'Տարածեցէք', and the website URL.

ՌԱԿ-ի Երախտաւորները Ամերիկահայ Յայտնի Ազգային՝ Կարապետ (Չարլի) Սիւլահեան 1903 Այնթապ - 1976 Պոսթոն

ՆՐԱ ԱՅՐՈՒՆԵՆ «Չարթոս»-ի Երեց Աշխատակից

Երախտաւոր Կարապետ Սիւլահեան ծնած է Այնթապ, Դեկտեմբեր 1903-ին, Հրանդ եւ Լեւոնդի Սիւլահեաններու բարեհամբաւ յարկին տակ:

Կարապետ երկրորդ մանջ գաւակն էր Սիւլահեաններուն, ուներ Գեորգ եւ Քիւզանդ երկու եղբայրներ ու քոյր մը՝ Մարի անունով:

Հայրը՝ Հրանդ, Այնթապի մէջ ծանօթ էր որպէս հնչեղեան պատասխանատու առջնորդ, որ աչքի գարկած էր իր գործունէութեամբ, մասնաւոր 1890-ականներու համիտեան ջարդերու ընթացքին:

Կարապետ փոքր տարիքէն կը յաճախ տեղւոյն Վարդանեան ազգային վարժարանը, ուր ուսանած էր իր հայրը՝ Հրանդ, որ եղած էր վարժարանի առաջին շրջանաւարտներէն:

Հազիւ 12 տարեկան, վրայ կը հասնի Մեծ Եղեռնը ու ընտանեօք կը տարագրուի Հայկէ: Մատուցեան նենգութեամբ մը, հայրը՝ Հրանդ պիտի բանտարկուէր ու կարճ ժամանակ ետք՝ իրաջնով ազատուր բանտէն:

Հայկէի մէջ Կարապետ արկածի մը հետեւանքով կը կորսնցնէ իր կրտսեր եղբայրը՝ Քիւզանդը ու 1920-ին երթորդ Գեորգի հետ կու գայ Ամերիկա (Պոսթոն), հետեւելու առամաքուծութեան ուսումին, սակայն կը դառնայ ճարտարարւեստական խորհրդատու: Իսկ Գեորգ կը դառնայ մասնագետ տոմարակալութեան ու հաշուապահութեան մէջ:

Պոսթոնի մէջ Կարապետ կը բնակէր, տանելու «Ազգ» թերթի (ապագային «Պայքար» օրաթերթի) խմբագիր Ս. Նազարին քով, որ եղած էր իր հօրը դասընկերը ու հեռաւոր հարազատը Այնթապի մէջ: Իսկ Բաբգէն Արք. Կիւլեւերեան (յետագային աթոռակից կաթողիկոս) որպէս բոլորին ծանօթ այնթապցի, իր հայրական խնամքին առարկան դարձուցած էր Սիւլահեան եղբայրները:

Կարապետը կ'որոշէ հետեւի գիշերային դասընթացներու ու իր հմտութեամբ կը ծանօթանայ ամերիկեան բարգաւաճ ճարտարարուեստին, ու յետագային կը դառնայ յաջողակ խորհրդատու մը: Պոսթոնի արուարձաններէն

հայաշատ Ուոթըրթաուն քաղաքը, այդ օրերուն եղած էր տարագիր խարբերողներու եւ այնթապցիներու հիւրընկալը՝ իր ազգային հաստատութիւններով: Կարապետ մուտք կը գործէ շրջանի Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան շարքերը ու կ'անդամագրուի տեղւոյն ակումբին: Իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Բարեգործականի տեղւոյն մասնաճիւղին: Հայրը՝ Հրանդ տակաւին Այնթապ գտնուած ժամանակ, անդամակցած էր ՀԲԸ Միութեան ու յետագային Հայկէի մէջ դարձած էր «պատուոյ անդամ»: Երիտասարդական կորովով տոգորուած Կարապետը, կարճ ժամանակի մէջ կ'ընտելանայ ամերիկեան ատենոյ կենցաղին, ու իր ապրուստը հոգալու պարտաւորութեան բացի, կը նուիրուի մեծն Պոսթոնի շրջակայքը ծաղկող Նորահաստատ գաղութի շուկային: Որպէս երիտասարդ ուժ, ան կը դառնայ իր կուսակցական ակումբի ատենապետը ու այդ միջոցով մասնակցութիւնը կը բերէ մեծն Պոսթոնի հասարակական կենցաղին, մինչեւ իր Հայկէ վերադարձը՝ 1929-ին, ուր տակաւին ծնողները կ'ապրէին, իսկ հայրը արդէն դարձած էր առաջին հայ երեսփոխանը, Ֆրանսայի հովանաւորութեան ներքեւ գործող սուրիական կառավարութեան:

Հայկէի մէջ ան դարձեալ կը լծուի հասարակական գործունէութեան ու մաս կը կազմէ տեղւոյն ՌԱԿ-ի ակումբին, ինչպէս նաեւ իր մասնակցութիւնը կը բերէ տեղւոյն Բարեգործականի ծրագիրներուն:

Սիւլահեան հոգաբարձու կ'ընտրուի Կիլիկեան վարժարանի ու ապա կը դառնայ նոյն կազմի ատենապետը եւ իր պաշտօնակալութեան շրջանին կը նպաստէ վարժարանի բարելաման ու վերելքին:

1935-ին կը վերադառնայ Պոսթոն, ճարտարարուեստական նոր ծրագրի մը որոնման համար ու ազգային իր հմտացած փորձառութեամբ կը ստանձնէ ատենապետութիւնը Ուոթըրթաունի Ս. Յակոբ Հայց. Առաքելական եկեղեցոյ ծիսական խորհուրդին:

Հետգիտէ Սիւլահեան միութեանական այլ պարտաւորութեանց պատասխանատուութիւնը կը ստանձնէ, դառնալով



ՌԱԿ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանային վարչութեան անդամ ու տարիներ ետք՝ նոյն կազմի ատենապետը: Իսկ նախածնունդը կը հանդիսանայ Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին կազմակերպել Այնթապի Հայրենակցական Միութիւնը իր մասնաճիւղերով, որոնք դարձած էին գործել Գեորգ. Դեւոնդ Արք. Դուրեանի սպանութեան ետք:

Յետագային Սիւլահեանի ջանքերով Այնթապի Հայրենակցական Միութեան նպատակադրումը կը դառնայ օժանդակել հայրենիքէն ներս գոյութիւն ունեցող Նոր Այնթապ անակին:

1938-ին Նիւ Եորքի մէջ կենցաղը ընկեր կ'ընտրէ Եօժէնի Պուլաքճեանը ու անոնք կը բախտաւորուին դուստրով մը Ճոյս անունով, որ յետագային կը պաշտօնակարէ Արցախի Ազգերու Կազմակերպութեան ներս:

Երախտաւոր Սիւլահեան ճանչցուցաւ Հիւսիսային Ամերիկայի գաղութներուն համար, որպէս նպաստընկալ ծրագիրներու հանգանակիչ ու այդ միտումով ան կրցաւ ամերիկաբնակ այնթապցիներու որպէս ատենապետ հանգանակութիւն կատարել 1946-48 տարիներուն, նպաստելու համար ՀԲԸ Միութեան ներգաղթի հանգանակութեան արշաւին, որ նպատակադրուած էր հասցնել մէկ միլիոն տղարի:

Ամերիկահայ այնթապցիներու ծրագիրներէն կարեւորագոյնը հանդիսացաւ Նոր Այնթապ անակի ծանեակի գործարանի մեքենական սարքաւորման նպատակ ու այդ միտումով շուրջ 300,000 տոլար կը հանգանակուի առաւելաբար երախտաւորին ջանքերով:

Սիւլահեանի ազգային-հասարակական գործունէութիւնը, որ ժամանակէն էր ան Հրաչ Երուանդէն, Տոքթ. Յովհաննէս Ծովիկեանէն եւ անշուշտ իր կուսակցական կնքահայր՝ Արմենակ Նազարեանէն (Ա. Նազար), զինք դարձուցած էին շրջուն կազմակերպիչը միութեանական աշխուժութեան: Յաճախ կը ճամբորդէր Ամերիկայի նորահաստատ գաղութները, որոնք միտարներ, որոնք պիտի նպաստէին հայապահպանման ծրագիրներու:

1960-ին դարձեալ կը դառնայ ատենապետը ՌԱԿ Արեւելեան Ամերիկայի Շրջանային վարչութեան ու կը ձեռնարկէ օժտել շրջանակը նոր կերպով ստեղծելով մը, որ պիտի դառնար «Պայքար» օրաթերթի եւ "The Armenian Mirror Spectator" շաբաթաթերթի խմբագրատունը: «Պայքար»-ի ատենոյ խմբագիրն էր Դոկտ. Նուպար Պելլուրեանը, իսկ "Mirror"-ի խմբագիրները Պապ-Վահանը: Երախտաւորը կարճ ժամանակի մէջ կ'իրականացնէ բացումը նոր կալուածին, որ 1962-էն ստիչի կը ծառայէ որպէս համայնքային կեդրոն Mt. Auburn փողոցին վրայ Ուոթըրթաունի մէջ:

Սիւլահեանին նաեւ կը վստահուի կազմել օժանդակ մարմիններ Պոսթոնի, Նու Անճելըսի եւ Ֆրեզնոյի մէջ, նպաստելու Պելլուրի Վահան Թէքէեան վարժարանի ջրաւոր սաներու ֆոնտին:

ՌԱԿ Շրջանային վարչութեան Սիւլահեանի ատենապետութեան շրջանին, շրջանակը կը դառնայ ՌԱԿ Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի շրջանակ կեդրոնի մը, որպէս փոփոխութեան կառուցողը կը ձեռնարկէ հանգանակ-


կութեան, Մոնթրէալի մէջ ունենալու Թէքէեան կեդրոն մը եւ յետագային պիտի ծաւալէր միութեանական աշխույժ գործունէութիւն:

Մեծ Եղեռնի յիսնամեակէն ետք, Սիւլահեան կը դառնայ հիմնադիրներէն Հայ Իրաւանց Խորհուրդին, իրաւաբան Տիգրան Սմարտեանի եւ պատմաբան Տիգրան Պոյաճեանի կողքին: Իսկ Մասնակ Զանկի հետ հիմը դրաւ Ազգային Հայագիտական Միութեան (NAASR) որու ծրագիրն էր օժանդակել Ամերիկայի մէջ հայագիտական ուսման ու իրատարակական զարգացման:

1969-ի Հոկտեմբերին, որպէս պատգամաւոր կը ներկայացնէ իր շրջանակը Պելլուրի մէջ գումարուած ՌԱԿ ԺԳ. Պատեանաւորական ժողովին, ուր կը հանդիպի իր գաղափարակից ընկերներուն, որոնք ծանօթ էին արդէն իր ազգաշէն գործունէութեան:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի կոնդակով, այնթապցիները Ամերիկայի տարածքին խրախուսուած էին հանգանակելու քառորդ միլիոն տղար՝ Նոր Այնթապ անակին մէջ կառուցելու հիւսուածեղէնի գործարան մը. դարձեալ Սիւլահեան այս անգամ որպէս պատուակալ նախագահը Այնթապցիներու Հայրենակցական Միութեան, պիտի իրականացնէր այդ հանգանակութիւնը, որ պիտի դառնար իր ազգային վերջին իրագործումը ու իրեն պիտի շնորհուրէր կաթողիկոսական յատուկ կոնդակ: Դժբախտաբար իր առողջական վիճակի վատթարացումը արգելք պիտի հանդիսանար ներկայ գտնուիլ 1975-ի Սեպտեմբերին, Նոր Այնթապ գործարանի պաշտօնական բացման:

Շատ չանցած այս անբասիր ու նուիրեալ երախտաւորը իր աչքերը յալիտեան պիտի փակէր 1976 Փետրուարին Զեմպրի մէջ, Պոսթոնի շրջանը:



Պատմութեան Մէջ Այսօր

Քոֆի Անան

Քոֆի Անան (անգլ.՝ Kofi Atta Annan, 8 Ապրիլ, 1938, Կումասի), Ղանացի դիւանագետ, ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար՝ 1 Յունուար, 1997-31 Դեկտեմբեր, 2006:

2001-ին արժանացած է խաղաղութեան նուբելեան մրցանակ: Կը Տիրապետէ անգլերէն, ֆրանսերէն եւ շարք

մը արիւնական լեզուներու: Ուսանած է Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:

Մարզական

Սպանիոյ Ախոյեանութիւն

Չելթա Տէ Վիլո Զիջեցալ Վալենսիային

Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 29-րդ հանգրուանը իր արարտին հասաւ: Այս հանգրուանի վերջին օրը 13-րդ դիրքը գրաւող «Վալենսիա»-ն փաստեց թէ գորաւոր խումբ է, երբ իր դաշտին վրայ 3-2 հաշիւով յաղթեց 10-րդ դիրքը գրաւող «Չելթա Տէ Վիլո»-ին: Այս հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Եյպար - Լաս Փալմաս 3-1
- Վալենսիա - Չելթա Տէ Վիլո 3-2, կոլեր.Տանի Փարեյս 38, Մունիթ 67, Զ.Սոլեր 86 - Բապրալ 16, Եակո Ասփաս տուգ.80

Ռուսիոյ Բաժակ

Մանուգարեանի Ուրալը Հասաւ Աւարտական



Շաբթուան ընթացքին տեղի ունեցաւ Ռուսիոյ բաժակի մրցաշարի կիսաարտական հանգրուանը: Առաջին մրցումին, 9-րդ դիրքը գրաւող Մոսկուայի «Լոքոմոթիւ»-ը ընդունեց 5-րդ դիրքը գրաւող «Ռուֆա»-ն եւ յաղթեց միակ կոլով ու հասաւ արտական հանգրուան: Միակ կոլի հեղինակն էր փորթուկալցի Մանուէլ Ֆերնանտէշը 44-րդ վայրկեանին:

Իսկ երկրորդ մրցումին, Հայաստանի հաւաքականի անդամ Ետկար Մանուգարեանի մաս կազմած Եքաթերինպուրկ քաղաքի «Ուրալ»-ը իր դաշտին վրայ ընդունեց 10-րդ դիրքը գրաւող Զազանի «Ռուպին»-ը եւ յաղթեց 2-1 հաշիւով: Կոլերը նշանակեցին Իյիլնը 13-րդ վայրկեանին եւ Նովիկովը 58-րդ վայրկեանին, մինչ «Ռուպին» հաւասարած էր ճոնաթասի միջոցով 31-րդ վայրկեանին: Մանուգարեան մրցումին մասնակցեցաւ 35-րդ վայրկեանէն սկսեալ, երբ փոխարինեց ռումանացի Պիքֆալվին: Աւարտական մրցումին «Ուրալ»-ի մրցակիցը պիտի ըլլայ Մոսկուայի «Լոքոմոթիւ»-ը:

Հոլանտայի Ախոյեանութիւն

Թվերթ Հաւասարեցաւ Փի Ես Վի-ի Հետ

Հոլանտայի ֆութպոլի ախոյեանութեան 29-րդ հանգրուանի վերջին մրցումին, 7-րդ դիրքը գրաւող Էնխքետէ քաղաքի «Թվերթ»-ն իր դաշտին վրայ ընդունեց 3-րդ դիրքը գրաւող Այնտհովընի «Փի Ես Վի»-ն եւ խումբերը հաւասարեցան 2-2 հաշիւով: Ստորեւ տեսնել այս հանգրուանի ամենակարեւոր մրցումներու արդիւնքները.

- Այաքս Ամսթերտամ - Էյ Զէտ Վլքմար 4-1, կոլեր.Թրաօրտ 16, Տ.Սանչէզ 71, Շոտ տուգ.82, Եունես 88 - Վէկհորսթ 55
- Ֆեյենորտ Ռոթ. - Կո Ըհետ Իլըզ Տեվընթըր 8-0, կոլեր.
- Թվերթ Էնխքետէ - Փի Ես Վի Այնտհովըն 2-2
- կոլեր.Ունալ 7, Սելինս 90+2 - Լոքստիա 17, Մորենս 51
- Էքսելսիոր Ռոթթըրտամ - Իւթերթսթ 1-3, Հերաքլէս - Վիթես Արնհեմ 0-1

Սերպիոյ Բաժակ

Կարմիր Աստղ Եւ Փարթիզան Հասան Կիսաարտական

Շաբթուան ընթացքին տեղի ունեցած Սերպիոյ բաժակի քառորդ արտական հանգրուանի մրցումներուն, Պելկրատի «Փարթիզան»-ը իր դաշտէն դուրս յաղթեց համաքաղաքացի «Վատովազ»-ին 2-1 հաշիւով եւ հասաւ կիսաարտական հանգրուան: Ճորճեւիչ 80-րդ վայրկեանին եւ Լէտարտո 90-րդ վայրկեանին նշանակեցին խումբին կոլերը: Մինչ առաջատար Պելկրատի «Կարմիր Աստղ»-ը կամ «Տրվենա Չվեգտա»-ն իր դաշտին վրայ ընդունեց գորաւոր Լուչանի քաղաքի «Մլատոսթ»-ը եւ յաղթեց 4-1 հաշիւով: Կոլերը նշանակեցին Զանկա, Միլիչ, Պոպիչ եւ Լուքովիչ տողանային հարուածով: Միւս մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Վոյվոտինա Նովի Սատ - Պորաք Չաչաք 5-2
- Սրպոսա Ուժիցե - Չուքարիշչի 0-3

Քոփա Սուտամերիքեան

Սփորթ Ռեսիֆէ Եւ Զորինթինա Զաղթեցին

Հարաւային Ամերիկայի ակումբներու երկրորդ մրցաշարի՝ Քոփա սուտամերիքեանայի գտումի առաջին հանգրուանի երթի մրցումներուն Պրագիլի «Սփորթ Ռեսիֆէ»-ն, «Զորինթինա»-ն եւ

«Ֆլամելկո»-ն կարեւոր յաղթանակներ տարին իրենց դաշտերուն վրայ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Տեֆենսա Ի ժուսթիսիա (Արժ.) - Սաօ Փալո (Պր.) 0-0
- Զորինթինա (Պր.) - Ունիվերսիտատ Զիլի (Հիլի) 2-0
- Ֆլումինենսէ (Պր.) - Լիվըրպոլ (Ուրուկ.) 2-0
- Եպուտ. Զարաքսա (Վեն.) - Սոլ Տէ Ամերիքա (Փար.) 2-3
- Սփորթ Ռեսիֆէ (Պր.) - Տանուպիո (Ուրուկ.) 3-0
- Օրիենթէ Փեթրոլեո (Պր.) - Տեփ.Զունեսա (Էքու.) 1-1

Շաբթաօվերջի Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել շաբթաօվերջի մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

Կիրակի 9 Ապրիլ 2017

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 15:30 Նըմէ (2) - Նապի Շիթ (5), Մարզական Աւան
ԼԻԲԱՆԱՆԻ Դ.ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՆՈՅՏԱՆ.6-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 10:30 Անդրանիկ (7) - Էտվեստ Սաքըր Աք.(6), Նըմէի մարզ.

ՄՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 31-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 13:00 Կրանտա (19) - Վալենսիա (12)
 Ժամը 17:15 Չելթա Տէ Վիլո (10) - Եյպար (8)
 Ժամը 19:30 Օսասունա (20) - Լեկանէ (17)
 Ժամը 21:45 Լաս Փալմաս (13) - Ռեալ Պեթիս (14)

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 28-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 16:30 Հերթա Պերլին (6) - Աուկապուրկ (16)
 Ժամը 18:30 Ինկոլդրատ (17) - Տարվթատ98 (18)

ԱՆԳԼԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 32-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 15:30 Սանտըրլէտ (20) - Մանչեսթըր Եունայթըտ (6)
 Ժամը 18:00 Էվըրթըն (7) - Լէյսթըր Սիթի (11)

ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 31-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 13:30 Սամփտորիա (9) - Ֆիորենթինա (8)
 Ժամը 16:00 Սիլան (7) - Փալերմօ (19)
 Ժամը 16:00 Զորթոնէ (18) - Ինթըր Միլան (6)
 Ժամը 16:00 Պոլոնիա (14) - Ռոմա (2)
 Ժամը 21:45 Լազիօ Ռոմա (4) - Նափոլի (3)

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 32-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 16:00 Թուլուզ (10) - Օլիմպիք Մարսէյ (5)
 Ժամը 18:00 Սենթ Էթիէն (7) - Նանթ (9)
 Ժամը 22:00 Փարի Սէն Ժերմէն (2) - Կենկան (8)

ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 28-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 22:15 Մորէյրենսէ (16) - Պենֆիլքա (1)
ՌՈՒՄԻՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 14:00 Ռուֆա (5) - Սպարտակ Մոսկուա (1)
 Ժամը 16:30 Զրասնատար (4) - ԲԿՄԱ Մոսկուա (2)
 Ժամը 19:00 Լոքոմոթիւ Մոսկուա (9) - Ռոստով (7)

ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 30-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 15:30 Փի Ի Սի Չվոլլէ (12) - Ֆեյենորտ Ռոթթըրտամ (1)
 Ժամը 17:45 Փի Ես Վի Այնտհովըն (3) - Վիլմ Թիլպըրկ (11)
ՅՈՒՄԱՍՏԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 28-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 19:00 Աքթերաս Թրիփոլիս (12) - Զսանթի Փիկատիա (6)
 Ժամը 19:00 Փանաթոլիքոս Ակրինիօ (11) - Վերիա (16)

ՌԻԵՐԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 14:00 Ալեքսանտրիա (5) - Չարիա Լուկանսք (3)
ՍԿՈՎԻՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 32-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 14:30 Էպըրտին (2) - Ռէյնճըրգ (3)

ԱՐՃԱՆԹԻՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 01:30 Թայրէս Զորտոպա (11) - Լանուս (10)
 Ժամը 20:00 Պանֆիլտ (9) - Պելկրասօ (29)
 Ժամը 22:15 Փաթրոնաթօ (15) - Ինտիփետիտէթ (14)
 Ժամը 00:15 Ռիվըր Փլէյթ (5) - Զիլմէս (27)

ԱՄՆ-Ի ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 04:30 Ռեալ Սոլթ Լէյք (11) - Վանքուվըր Ռայթսթիս (8)
ԹԵԽՆԻՍ ՏԵՅՎԻՍ ԲԱՏԱԿԻ 1/4-ՐԴ ՄԱՐՏ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 05:00 Աւստրալիա - ԱՄՆ, Ժամը 14:30 Ֆրանսա - Մ.Բրիտ.
 Ժամը 15:00 Սերպիա - Սպանիա, Ժամը 15:30 Պելճիքա - Իտալիա

ՖՈՐՄԱՆԻԱ 1-Ի 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԿՐԱՆ ՓՐԻ
 Ժամը 09:00-Ես սկսեալ beinsports կայանէս
ՀԵՇՏԵԼԱՐԱՆԻ ՓԱՐԻՉ ՌՈՒՊԵ ՄՐՑՈՒՄ
 Ժամը 13:00-Ես սկսեալ eurosport1 եւ beinsports կայաններէս

Պասքէթպոլ

Լիբանանի Ախոյեանութիւն Ռիատի Եւ Մուրթահետ Յաղթական



Լիբանանի պասքէթպոլի ախոյեանութեան երկրորդ փուլի 4-րդ հանգրուանին, «Հիքմէ» իր դաշտին վրայ ընդունեց Պէյրութի «Հ.Մ.Ը.Մ.»-ը եւ պարտուեցաւ 67-68 հաշիւով: Իսկ «Պիպլոս» յաղթեց «Լուայգէ»-ի դաշտին վրայ 90-84 հաշիւով ու ամրապնդեց

իր երկրորդ դիրքը: 5-րդ հանգրուանի առաջին մրցումին, «Ռիատի Պէյրութ» իր դաշտին վրայ ընդունեց «Շանվիլ»-ը եւ յաղթեց 93-76 հաշիւով: Իսկ Թրիփոլիի «Մուրթահետ»-ը իր դաշտին վրայ յաղթեց «Թատամոն Չուք»-ին 102-101 հաշիւով:

Թենիս

Տէյվիս Բաժակ Հայաստան - Պուլկարիա 0-3

Թենիսի խմբային տողը մրցաշարի Եւրոպայի երրորդ դասակարգի մրցումները սկսան Պուլկարիոյ մէջ 15 հաւաքականներու մասնակցութեամբ: Հաւաքականները բաժնուեցան 4 խմբակներու: Իւրաքանչիւր խմբակի առաջին դիրքը գրաւողները պիտի մրցին ուրիշ խմբակի մը առաջատարին դէմ եւ երկու յաղթող խումբեր պիտի բարձրանան Եւրոպայի Բ.դասակարգ: Հայաստանի հաւաքականը մաս կազմեց առաջին խմբակին, Պուլկարիոյ եւ Յունաստանի հետ: Առաջին մրցումին Հայաստան պարտուեցաւ Պուլկարիայէն 0-3 մրցումներու հաշիւով: Միջայել Խաչատրեան պարտուեցաւ Տիմիթար Զուլմանովէն 3-6, 6-7 թայ պրէյք 0-7 հաշիւով: Երկրորդ մրցումին, Միջայել Աւետիսեան զիջեցաւ Ալեքսանտար Լազովին 0-6, 0-6 հաշիւով: Իսկ վերջին՝ գոյգի մրցումին Միջայել եւ Սեդրակ Խաչատրեաններ պարտուեցան Լազարով Կրոզտանով գոյգէն: Երկրորդ մրցումին Հայաստան պարտուեցաւ Յունաստանէն դարձեալ 0-3 մրցումներու հաշիւով: Հայաստանի հաւաքականը պիտի մրցի 9-12րդ դիրքերուն համար: Հարկ է նշել թէ Հայաստանի մարզիչն է Վահէ Աւետիսեանը:

Ծանրամարտ

Եւրոպայի Ախոյեանութիւն Սոնա Պոզոսեան Շահեցաւ Պրոնզէ Մետալ

Սոնա Պոզոսեան առաջին մետալը նուիրեց Հայաստանին, Եւրոպայի ծանրամարտի ախոյեանութեան մրցումներուն: 19 տարեկան մարզիկուհին, 75 քլ.դասակարգին մէջ 227 քլ.երկամարտի գումարով գրաւեց 3-րդ դիրքը եւ շահեցաւ պրոնզէ մետալը:

Սեղանի Թենիս

Լեռնալիբանանի Բ.Դասակարգի Ախոյեանութիւն Անդրանիկ Անթիլիաս Շահեցաւ Տիտղոսը

«Անդրանիկ Անթիլիաս» խումբը շահեցաւ Լեռնալիբանանի ախոյեանութեան տիտղոսը: 35 Բ.դասակարգի խումբերու մասնակցութեամբ տեղի ունեցած մրցաշարին, «Անդրանիկ Անթիլիաս» հասաւ երկրորդ փուլ եւ արտական մրցումին յաղթելէ ետք «Ատապ Ուա Ռիատա Զֆարշիմա»-ին 3-1 մրցումներու հաշիւով շահեցաւ տիտղոսը: 3-րդ դիրքը գրաւեց «Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ»-ը: Այս երեք խումբերը պիտի միանան Լիբանանի նահանգներու ախոյեան 5 խումբերու ու Ապրիլ 20-Ես 21 պիտի մրցին դահլէտի համար Բ.դասակարգի ախոյեանութեան տիտղոսը: Ախոյեան խումբը պիտի բարձրանայ Ա.դասակարգ:



MEA
to
ARMENIA - YEREVAN

Starting USD **250**
*taxes excluded

EVERY SATURDAY & TUESDAY

Hotline: +961-1-258852
Mobile: +961-3-148248 / +961-3-881944
E-mail: info@polo-travel.com
www.polo-travel.com
Bourdj Hammoud - Tripoly Str. - Harboyan Trade Center - Ground Flr.

Դրանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեալ թերթի մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակէտը: Կամքէ անկախ սպորտային վրիպակներու պարագային, կ'ապալինիք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: